«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում

Հաստատություն՝ Արագածոտնի թիվ 18 մանկապարտեզ

Դաստիարակ՝ Լեյլի Նիկոլյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ

Բովանդակություն

Ներածություն.....3
Ինքնուրույն նախաձեռնության և ստեղծարարության ունակությունների
էությունն ու սահմանումը .....;.....4
Կերպարվեստային գործունեություն 6
Ոչ ավանդական նկարչության 8
Եզրակացություն 14
Գրականության ցանկ 15

Ներածություն

Երեխաները վաղ տարիքից փորձում են արտացոլել իրենց տպավորությունները շրջապատող աշխարհի իրենց պատկերացումների մասին : Կերպարվեստային գործունեությունը նախադպրոցականների գեղարվեստական դաստիարակության կարևորագույններից է: Այն իրականացվում է նկարչության, ապլիկացիայի, ծեփի,կառուցողական նյութերով պարապմունքների գործընթացում: Կերպարվեստային պարապմունքների նպատակն է զարգացնել երեխայի ստեղծագործական և կառուցողական մտածողությունը, գեղագիտական ընկալումները:

Թեմայի արդիականություն՝ Վերոնշյալ թեման արդիական է, քանի որ ժամանակակից կրթական համակարգի նարևոր խնդիրներից և արժեքային կողմնորոշիչներից մեկն է երեխաների մեջ ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը: Այս որակները օգնում են երեխային հետագայում ինքնադրսևորվել կյանքի բոլոր բնագավառներում: Երեխաները այս որակների շնորհիվ զարգացնում են իրենց ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Նպատակ ՝ Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ինքուրույն նախաձեռնության և ստեղծարարության ունակությունների էությունը և դրանց զարգացումն ու դրսևորումները ոչ ավանդական նկարչության ընթացքում :

Ըստ այդմ առաջադրվում է հետևյալ **խնդիրները** ՝

- Ուսումնասիրել ինանուրույն նախաձեռնության և ստեղծարարության ունակությունների էությունն ու սահմանումը
- Ներկայացնել ոչ ավանդական նկարչության կիրառումը

Ըստ այդմ էլ հետազոտակամ աշխատանքը բաժանվում է երկու գլուխների համապատասխանաբար՝

- Գլուխ առաջին ՝ ինքնուրույն նախաձեռնության և ստեղծարարության ունակությունների էությունը ու սահմանումը
- Գլուխ երկրորդ ՝ կերպարվեստի պարամունքների մեջ ինքնուրույն նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման ուղղիները:

Գլուխ1.1 Ինքնուրույն նախաձեռնության և ստեղծարարության ունակությունների էությունն ու սահմանումը

Ինքնուրունությունը հատկանիշ է, որը պետք անընդհատ զարգացնել։ ինքնուրույնությունը ձևավորվում է աստիճանաբար երեխայի յուրաքանչյուր տարիքային փուլում ընդ որում յուրաքանչյուր տարիքում այն ունի տարբեր հատկություններ և դրսևորման տարբեր ձևեր։Միևնույն ժամանակ յուրաքանչյուր տարիքային փուլում անհրաժեշտ է որպեսզի երեխաների ինքնուրույնության ձգտումը խրախուսվի մեծերի կողմից համապատասխան չափաբաժիններով և ռացիոնալ կերպով զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններ երեխաների մեջ։ Ինքնուրույնությունը սերտորեն կապված է այնպիսի հոգեբանական հատկանիշի հետ ինչպիսին է երեխայի կամքը, որի շրջանակներում երեխան գիտակցված կերպով կարգավորում է սեփական վարքը և գործունեությունը։ստեղծագործականություն կամ ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ սկսած ամենավաղ տարիքից: Կան կարծիքներ, որ ստեղծագործականությունը անձի բնածին հատկությունն է, որոշ երեխաների մոտ այն առկա է, որոշների մոտ՝ ոչ։բազմաթիվ մանկավարժական և հոգեբանական հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել,որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործական հակումները։այդ հակումները պետք է մշտապես զարգացնել,որպեսզի դրանք դառնան ստեղծագործական մոտեցումներ և ճկուն միտք։ Երեխաները վաղ տարիքից փորձում են արտացոլել իրենց տպավորությունները շրջապատող աշխարհի իրենց պատկերացումների մասին։ Յուրաքանչյուր երեխա, ճանաչելով իրեն շրջապատող աշխարհը, փորձում է այն արտացոլել իր գործունեության մեջ: Խաղի մեջ, պատմվածքներում,նկարչության մեջ և այլն: Ստեղծագործական գործունեությունըբհիանալի հնարավորություններ է տալիս այս առումով։ որքան բազմազան լինեն ստեղծագործական միջավայրի ձևավորմանը նպաստող պայմանները, այնքան ավելի վառ կդրսևորվեն երեխայի գեղարվեստական կարողությունները։ Ոչ ավանդական տեխնիկայով նկարելը լայն շրջանակ է երեխաների

երևակայության համար, հնարավորություն է տալիս երեխային ներգրավվել ստեղծագործության մեջ, զարգացնել երևակայությունը, ցուցաբերել անկախություն և նախաձեռնություն, ցույց տալ իրենց անհատականությունը:

Այսպես, ըստ Ս. Օժեգովի բառարանի, <<ինքնուրույն>> հասկացությունը ունի մի քանի սահմանումներ

➢ Անկախ, ազատ

➢ Անկախ գործողություններ և դատողություններ կատարելու ունակություն

➢ Մյուսներից առանձնացված

➢ Ինքնուրույն ուժերով կատարվող գործունեություն՝ առանց կողմնակի օգնության և ուղղորդման

➢ Կողմնակի ազդեցությունից անկախ

Գլուխ 2 Կերպարվեստային գործունեություն

Կերպարվեստային գործունեությունը նախադպրոցականների գեղարվեստական դաստիարակության կարևորագույն միջոցներից է: Այն իրականացվում է նկարչության, ապլիկացիայի, ծեփի, կառուցողական նյութերով պարապմունքների գործընթացում: Կերպարվեստային պարապմունքների նպատակն է զարգացնել երեխայի ստեղծագործական և կառուցողական մտածողությունը, գեղագիտական ընկալումները, ինչպես նաև լուծել հետևյալ կարրևորագույն խնդիրները.

- Սովորեցնել տեսնել, դիտել, զգալ շրջապատող աշխարհը, հարստացնել զգայական փորձը՝ տեսողական, լսողական, շոշափելիքի զգացողությունը, կարողանալ բնութագրել առարկաները՝ ըստ գույնի, ձևի, չափի, կարողանալ նկարելով բացահայտել առարկաների հարաբերությունները միմյանց նկատմամբ,
- ծանոթացնել լայնություն, բարձրություն, մեծություն հասկացություններին,
- զարգացնել առարկաները և երևույթները տեսնելու, դիտելու,համեմատություններ և վերլուծություններ կատարելու, դրանց նմանություններն ու տարբերությունները գտնելու, ընդհանրացումներ անելու ունակությունը:

Սկզբնական շրջանում, երբ երեխաները դեռ չեն կարող ճիշտ օգտվել նկար-

չական պարագաներից, դաստիարակը մատիտներ և յուղամատիտներ է տալիս երեխաներին՝ միայն նկարելուց առաջ, հետո այն պահում է երեխաների համար անհասանելի տեղում: Նկարչության պարապմունքների թեմաների ընտրությունը: Կերպարվեստային պարապմունքների թեմաները ընտրում է դաստիարակը,հաշվի առնելով ծրագրային պահանջները, ուսուցանվող տեխնիկայի բովանդակությունը և երեխաների կենսափորձը: 2-3 տարեկան երեխաների նկարչական գործունեությունը կոնկրետ է, առարկայական՝ նրանք նկարում են իրենց շրջապաում գտնվող ծանոթ առարկաները, բնության երևույթները: Առարկայական նկարչություն իրականացնելիս անհրաժեշտ է այն նախապես ուսումնասիրել, շոշափել: Դաստիարակի օգնությամբ երեխաները պետք է նշեն դրա բնորոշ հատկանիշները՝ գույնը, ձևը, չափը:

Նման գործունեության ընթացքում երեխայի մեջ ձևավորվում են հստակ պատկերացումներ տվյալ առարկայի մասին, հստակեցվում է դրա տեղը տարածության մեջ:

Կերպարվեստային պարապմունքների առջև դրված խնդիր գործունեության մեջ երեխան ազատ է նյութերի և ընտրության մեջ: Այն հնարավորություն է տալիս ծանոթանալու. առարկաների և երևույթների պատկերման ոչ ստանդարտձևերին: Աշխատելով տարբեր արտահայտչամիջոցներով՝ գունավորած մատիկներով, ձմռթված թղթով, հաստ վրձնով, փրփրապլաստով, կարտոֆիլով, սպունգով, խցանով, տերևով, օձառի պղպջակներով, խմորով, ձվի կեղևով և այլ միջոցներով, երեխան տարբեր նյութերի՝ ափսեի, ծառի տերևի, գունավոր կամ սպի- տակ թղթի, փուչիկների վրա կարող է ստանալ հարթ և անհարթ մակերեսներ: Ձևերի և միջոցների բազմազանությունը ստիպում է փոքրիկին հաղթահարել հանդիպող խոչընդոտները և անընդհատ հորինել ինչ-որ բան: Նկարչության այս տեսակը հնարավորություն է տալիս ընդլայնելու երեխաների պատկերացումները տարբեր նյութերի այլընտրանքային նշանակության և դրանք որպես գեղար վեստական արտահայտչամիջոց կիրառելուն:

Կերպարվեստային պարապմունքների ընթացքում կիրառելի են նաև խաղերը և վարժությունները, որոնք ներառում են կերպարվեստային գործունեության բաղադրիչներ: Առաջարկվող խաղ-պարապմունքների նպատակն է՝ օգնել երեխաներին հետաքրքիր, ուրախ և աշխույժ մթնոլորտում մասնակցել կերպարվեստի պարապմունքներին: Անհրաժեշտության դեպքում դաստիարակը կարող է կատարել համապատասխան փոփոխություններ:

1.2 ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ

Նկարչության ընթացքում կատարելագործվում են բոլոր հոգեկան ֆունկցիաները՝ տեսողական ընկալում, պատկերացում, երևակայություն, հիշողություն, մտածողություն: Գիտության և արվեստի շատ գործիչներ նրբորեն են վերաբերվում այլընտրանքային նկարչությանը՝ ջանալով երեխաներին չկապել մեծահասակի աշխարհընկալմանը: Ոչ ավանդական նկարչության տեխնիկաների ընտրությունը՝ որպես այընտրանքային նկարչության ստեղծագործական զարգացման միջոցներից մեկը, պատահական չէ: Ինքնաբերական նկարչությանը, երբ պատկերը ստացվում է ոչ թէ հատուկ արտահայտչական հնարքների օգտագործման արդյունքում, այլ որպես կանոն խաղային մանիպուլյացիայի էֆեկտ: Ոչ ավանդական պատկերացման այս տեսակը կարելի է անվանել «հեփփինինգ» : Ավանդական տեխնիկաները լայնացնում են երեխաների արտահայտչական հնարավորությունները, որը իրենից թույլ է տալիս ոչ մեծ չափով իրացնել իրենց կյանքի փորձը, ազատվել անհանգիստ ապրումներից և ազատ ստեղծագործել: Գոյություն ունեն նկարչության ընտարբեր տեսակներ, որոնք կարող են հետաքրքրություն առաջացներ երեխաների մեջ: Դաստիարակի նպատակն է օգնել երեխաներին այլընտրանքային նկարչության շնորհիվ ներկայացնել դրանք: Ոչ ավանդական նկարչական տեխնիկան հիանալի միջոց է փոքրիկ գլուխգործոցներ ստեղծելու համար: Ոչ ավանդական նպատակով նկարչությունը մանկական երևակայության նոր շրջանակ է բացում:Ոչ ավանդական տեխնիկայով նկարելը հետաքրքրաշարժ գործընթաց է, որը զարմացնում և հիացնում է երեխային: Պետք է հաշվի առնել, որ երեխայի համար շատ կարևոր դեր է խաղում զարգացնող միջավայրը:Միայն վրձինով նկարելը կարող է ձանձրալի լինել երեխայի համար: Զբոսանքի ժամանակ ուշադրություն դարձնել շրջապատող իրերին՝(ձողիկներ, խցաններ, տերևներ, քարեր, բույսեր, սերմեր , բմբուլ)...

Այս բոլոր առարկաները հարստացրել են արդյունավետ գործունեության անկյունները:Անսովոր նյութերը ու օրիգինալ տեխնիկան երեխաներին գրավում են նրանով, որ այստեղ չկա <<չի կարելի>> բառը, կարող ենք նկարել այն ինչ ուզում ենք , ինչպես ուզում ենք և նույնիսկ կարող եմք հորինել ձեր անստովոր տեխնիկան : Այլընտրանքային նկարչությունը նպաստում է մանկական վախերի վերացմանը, զարգացնում է ինքնավստահությունը , զարգացնում է տարածական մտածողություն, սովորեցնում է երեխաներին ազատորեն արտահայտել իրենց

միտքը, դրդում է երեխաներին ստեղծագործական որքնումների և լուծումների:

Ոչ ավանդական տեխնիկայով նկարելը սովորեցնում է երեխաներին աշխատել տարբեր նյութերի հետ: Զարգացնում է կոմպոզիցյան, ռիթմը, կոլոլիտի գունային ընկալման զարգացումը, զարգացնում է ձեռքի նուրբ շարժունակությունը երևակայությունը և երևակայության թռիչքը: Աշխատանքի ընթացքում երեխաները գեղագիտական հաճույք են ստանում: Ստացվում է, որ դուք կարող եք աղի

միջոցով պատկեր ստեղծել, իսկ ափը կարող է վերածվել կապույտ փղի: Մոխրագույն բիծը կարող է ծառ դառնալ, իսկ գազարն ու կարտոֆիլը կարող են զարմացնել անսովոր նախշերով:

Բլոտոգրաֆիա ոչ ավանդական նկարչական մեթոդը՝ (փչում է խողովակով)

ստեղծագործական հետապնդումների հերթական կախարդանքն է: Երեխաների համար նման զբաղմունքը շատ հուզիչ է, հետաքրքիր և շատ օգտակար: Ճիշտ այնպես, ինչպես ծղոտի միջով փչելը բարելավում է առողջությունը՝ թոքերի ուժը և երեխայի շնչառական համակարգը ամբողջությամբ:

Կախարդական նկար ստեղծելու համար ձեզ հարկավոր է մեծ ձողիկ, որը դուք պետք է փչեք, փչեք, փչեք ... մինչև թղթի վրա հայտնվի բարդ նկար: Երբ տարօրինակ նկարը պատրաստ է, կարող եք նկարել մանրամասներ նկարի վրա՝ տերևներ, եթե ծառ եք ստանում, աչքեր, եթե պարզվի, որ կախարդական արարած է:

Նյութեր՝ 1.Ջրաներկ; 2.Խողովակ; 3.Խոզանակ; 4.Թուղթ; 5. Բաժակ ջրի համար:Նկարչություն դրոշմներով

Դրոշմներով նկարելը շատ զվարճալի է և դրանով շատ հեշտ է ստանալ որոշակի նախշեր: Դրոշմելով նկարելը շատ զարգացնում է պատկերի ընկալման ունակությունը: Բամբակե չոփերը շատ լավ է համապատասխանում կետերով նկարելու համար:Այս նկարչական տեխնիկան նպաստում է ոչ միայն երեխայի մանր մոտորիկայիվզարգացմանը, այլ նաև հաստատակամությանը, համբերությանը և ուշադրության. կենտրոնացմանը:

Օճառի փրփուրով նկարելու համար անհրաժեշտ կլինի, ջրաներկ կամ

գուաշ, օճառ, կոկտեյլի համար ձողիկ, թուղթ: Հեղուկ ներկը և օճառը լավ խառնել տարայի մեջ: Իջեցնել խողովակը և փչել այնքան ժամանակ, մինչև պղպջակներ հայտնվեն: Պղպջակների վրա իջեցնել թուղթը, թեթևակի սեղմել և բարձրացնել:

Կարելի է ավարտին հասցնել վրձնի միջոցով:

Ձեռքի ափերով Երեխաները սիրում են ջրաներկով կամ գուաշով նկարելուց ձեռքերը ներկոտել, մատիկներով շոշափել, զգալ ներկը: Մենք էլ թաթիկները կիրառեցինք որպես այլընտրանքային միջոց: Ձեռքի ափերը ներկեցինք, և սաները ձեռքերով ստացան իրենց պատկերացրածը: Այս նկարչության միջոցով սաները զարգացնում են պատկերացումը, երևակայությունը: Փորձում են գուշակել ափի դիրքից ինչ պատկեր կստացվի, կամ ինչպես ափով ներկեն, որ, օրինակ՝արև կամ ծառ ստանան:

Երբ շատերը կարծում են, որ պատառաքաղը օգտագործվում է միայն սնունդից օգտվելու նպատակով ունենք այլընտրանք. այն կիրառում ենք նկարչության մեջ: Մինչև նկարելը սաները չեն պատկերացնում ինչպես կարող ենք պատառաքաղից ծաղիկ ստանալ:

Այս ոչ սովորական տեխնիկաներից յուրաքանչյուրը փոքրիկ խաղ է երեխայի համար: Այս տեխնիկայի օգտագործումը թույլ է տալիս երեխաներին ավելի հանգիստ և համարձակ զգալ, ավելի ինքնաբուխ: Այս տեխնիկան զարգացնում է երևակայությունը, տալիս է լիակատար ազատություն ինքնարտահայտման համար:

- նկարել ձողիկով/ բլոտոգրաֆիա
- նկարել օճառի պղպջակներով
- նկարել ճմրթված թղթով
- նկարել ականջի փայտիկներով
- նկարել աղով
- նկարել սպունգով
- պլաստիլինոգրաֆիա

Երբ աշունը ներկում է ծառերը՝ տերևները դեղնացնելով, մենք տերևը կիրառում ենք որպես նկարչության միջոց: Սաները տեսնում են, որ տերև կարող են նկարել ոչ միայն տերևին նայելով, այլ անմիջապես տերևն օգտագործելով նկարչության մեջ:

Մարդու ուղեղում խոսքի և ձեռքի մատների շարժումները կոորդինացնող կենտրոնները գտնվում են հարևանությամբ:Բոլոր շարժումները ղեկավարող կենտրոնի 1/3 –ը զբաղեցնում է ձեռքի մատների շարժումների կենտրոնը: Երեխայի մատների ծայրերին գտնվող նյարդային վերջավորությունները նյարդային ազդակներ են ուղարկում գլխուղեղին:

Գիտության կողմից հաստատված այս փաստը թույլ է տալիս ձեռքի դաստակը դիտարկելու որպես «խոսքի օրգան», որի մարզումն ու վարժեցումը նույնքան կարևոր դեր է խաղում երեխայի խոսքի զարգացման գործընթացում, որքան հնչարտաբերական ապարատը: Վերջավորությունները, նյարդային ազդակներ են հաղորդում գլխուղեղին: Այդ ազդակները, մասնավորապես ձևավորում են երեխայի բանավոր խոսքը: Ահա, թե ինչու է այդքան կարևոր մանր մոտորիկայի զարգացմանը:

Նկարչությունը, հատկապես, այլընտրանքային նկարչությունը, մեծ խթան է մոտորիկայի զարգացմանը:Այն իրենից ներկայացնում է նյարդային, մկանային և ոսկրային համակարգերի զարգացում՝ նպատակային, մանր,

կենտրոնացված շարժումների, գործողությունների միջոցով, որոնք հիմնականում իրականացվում են ձեռքի մատների միջոցով: Եվ որքան զարգացած է մոտորիկան, այնքան անձը ավելի ճկուն է հասարակական միջավայրում, և ավելի երաշխավորված է նրա կյանքի որակի ապահովումը: Նկարչության միջոցով, ակտիվացնելով երեխաների մատների աշխատանքը՝ խթանում ենք մանր մոտորիկայի զարգացումը և նպաստում ուղեղի ընդհանուր հասունությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր առօրյա կյանքում ակնհայտ է,որ երեխաները շատ սիրում են նկարել: Նրանց համար նկարչությունը յուրահատուկ լեզու է: Բոլոր երեխաները ունեն նկարելու ձգտում. դա նրանց համար ոչ թե արվեստ է, այլ խոսք: Նկարչության միջոցով երեխան կարողանում է արտահայտվել, այն ինքնաբուխ է , չի պահանջում կամային և ինտելեկտուալ ջանքեր: Այն իր բնույթով նման է խաղին և հետևաբար երեխայի համար արտահայտվելու, դրսևորվելու առավել հետաքրքիր, հաճելի և բնական տարբերակ է: Երեխայի կողմից շրջապատի գիտակցումը ավելի արագ է տեղի ունենում, քան բառապաշարի զարգացումը: Իսկ նկարչությունը առավել հեշտ տարբերակն է արտահայտելու այն ,ինչ երեխան գիտի իր շրջապատի մասին, այն, ինչ զգում է:Այսինքն, նկարչությունը լրացնում է բացակայող բառերը, լրացնում է խոսքը: Բացի դա նկարչությունը զարգացնող դեր ունի երեխայի համար: Կապված լինելով ձեռքի աշխատանքի հետ՝ նկարչությունը ձեռքը վերածում է խոսքի օրգանի Նկարչությունը զարգացնող դեր ունի նաև տեսողության, շարժողական կոորդինացիայի, խոսքի, մտածողության, երևակայության համար:

Իմ աշխատանքային փորձի ընթացքում հասկացել եմ,որ երեխաները շուտ են հոգնում միապաղաղությունից և նույն աշխատանքը կատարելուց:Այդ է պատճառը, որ մղեցի իմ առարկայի շրջանակներում նոր հետաքրքրությունների դաշտ գտնել և բացել երեխաներիի համար:Կարծում եմ այս մեթոդներով նկարչությունը հետաքրքրությունների նոր շրջանակ կբացի նրանց համար: Ոչ ավանդական նկարչությունն ինքնարտահայտվելու, ինքն իր հետ շփման միջոց է, հիանալի գործիք է ոչ միայն տրամադրությունը բարձրացնելու, այլև աշխարհին այլ աչքերով նայելու, իր մեջ նոր հնարավորություններ բացահայտելու համար:

Ուսումնասիրելով սաների ՝ ոչ ավանդական մեթոդներով նկարելու ընթացքն ու ոգևորությունը, իրենց կատարած աշխատանքը, նկարել ցանկացող աշակերտների թվի աճը, հաջորդ դասին նորից նկարելու սպասումը, ես հանգեցի այն եզրակացությանը, որ այլընտրանքային նկարչության կիրառումը երեխաների առաջացնում է սեր և մոտիվացիա կերպարվեստի նկատմամբ: Ինքնուրուևությունը հատկանիշ է, որը պետք անընդհատ զարգացնել: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանապարհի:

Գրականության ցանկ

1.Ժ. Ավետիսյան, Գ. Փոթիկյան <<Ոչ ավանդական նկարչություն>>

2. Ժ. Ավետիսյան, Գ Փոթիկյան <<Կերպարվեստային դիդակտիկ խաղ-պարապմունքներ>>

3. <<Նախաշավիղ>> գիտամեթոդական հանդես